

ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ



Biodiversity
International





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այգեգործություն. Արվեստ թե՞ գիտություն	3
Այգեգործություն և հետագա վերամշակում.	3
Այգեգործության հիմնական ցուցանիշները	5
«Այգեգործություն - պտղի մշակում» արժեշդթան	6
Այգեգործության բարելավման անհրաժեշտ նախաձեռնություններ	7
Հայ կանայք աշխատանքի շուկայում	8
Կանանց դերը Հայաստանի տնտեսական զարգացման գործում	11
Այգեգործություն. օգտակար զբաղմունք	14
Ապահովված համայնքներ, արդյունավետ այգեգործություն	15





Այգեգործություն. Արվեստ թե՛ գիտություն

Այգեգործությունը կարող է համարվել և՛ արվեստ՝ կապված բույսերի ներդաշնակ տեղաբաշխման հետ իրենց շրջակայքում, և՛ գիտություն՝ ներառելով բույսաբուծության

տեխնիկաներն ու սկզբունքները: Քանի որ բույսերը հաճախ աճում են այն պայմաններում, որոնք զգալիորեն տարբերվում են բնական միջավայրից, անհրաժեշտ է կիրառել բույսերի ֆիզիոլոգիայի, քիմիայի և բուսաբանության արդյունքում մշակված աճեցման մեթոդները, որոնք փոփոխվում են այգեգործների փորձի հետևանքով: Բույսերի աճեցման հիմնական սկզբունքները նույնն են աշխարհի բոլոր հատվածներում, սակայն գործնականում, բնականաբար, տեղական պայմանների համար ադապտացիա է պահանջում:

Այգեգործությունը ֆիզիկական պատրաստվածություն է պահանջում, քանի որ մեծ ուժ է ներդրվում յուրաքանչյուր աշխատանքի ժամանակ:



Այգեգործություն և հետագա վերամշակում.

Այգեգործությունը համայնքային տնտեսությունների համար հենակետային նշանակություն ունի: Այնտեղ, որտեղ հասանելի է ոռոգման ջուրը, հիմնականում տեղակայվում են մրգատու այգիներ, որոնք ձեռնտու են՝ շնորհիվ համեմատաբար



բարձր եկամտաբերության և բարենպաստ եղանակային ու կլիմայական պայմանների:

Միևնույն ժամանակ, հայկական միրգը, շնորհիվ համային բարձր

հատկանիշների, պահանջված է նաև արտաքին շուկաներում՝ հատկապես ՌԴ-ում, իսկ վերամշակված միրգը՝ նաև Եվրոպական մի շարք երկրներում:

Այգեգործության ստաբիլ աճը, պայմանավորված է ներդրումային դանդաղ վերադարձով (նոր տնկվող այգիներին առնվազն անհրաժեշտ է 5 և ավելի տարիներ բերք տալու

համար), ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման հետ կապված բարդություններով:

Այգեգործության զարգացմանը խոչընդոտում է նաև կարկուտից և ցրտահարությունից պաշտպանման միջոցների բացակայությունը, որը լուրջ ռիսկ է հանդիսանում:

Սակայն, ՀՀ մերձարևադարձային կլիման, բերքի հասունացման կարճ ժամանակահատվածը և մեղմ ձմեռը նպաստավոր պայմաններ են ստեղծում այգեգործության զարգացման համար: Այստեղ աճեցնում են ինչպես այս ենթաշրջանում ավանդապես մշակվող մրգեր, այնպես էլ մրգերի նոր տեսակներ՝ արքայանարինջ, արևադարձային մրգեր, որոնք հնարավոր չէ աճեցնել ՀՀ այլ շրջաններում:






Այգեգործության հիմնական ցուցանիշները

Համայնքներում տնային տնտեսությունների 90%-ը ներգրավված է այգեգործության մեջ: Նրանց մեծ մասն իրենց տնամերձ հողամասերում ունեն այգիներ: Տնամերձ հողամասերից դուրս այգեգործությամբ են զբաղվում մոտ 100 տնտեսություններ, որոնցից՝

- 11 տնտեսություններ ունեն 5 հա և ավելի այգիներ,
- 23 տնտեսություններ ունեն 1-5 հա այգիներ,
- 66 տնտեսություններ ունեն մինչև 1 հա այգիներ:




Ստորև ներկայացված են համայնքներում աճեցվող մրգերի հիմնական տեսակները և ծավալները:

Համայնքներում աճեցվող մրգերի հիմնական տեսակներն ըստ ծավալների



«Այգեգործություն – պտղի մշակում» արժեշղթան



Այգեգործության բարելավման անհրաժեշտ

նախաձեռնություններ.



- Ոռոգելի հողատարածքների ավելացում: Զորական համայնքում տնամերձ հողակտորներին ոռոգման ջուր ապահովող այլընտրանքային ջրագծի կառուցում:
- Ենթաշրջանի համար այգեգործական ռեսուրս-կենտրոնի հիմնում:
- Համայնքներում հակակարկտակայանների տեղադրման աջակցություն, որոնք թույլ կտան ընդհանուր առմամբ պաշտպանել մոտ 200 հա
- Վերամշակող ձեռնարկությունների հիմնման աջակցություն. Զորանոցներ, սառնարարներ, օդու արտադրություն, հյութերի և մուրաբաների արտադրություն:
- Տաղավարների կառուցման աջակցություն:
- Գյուղ. շուկայի կառուցման աջակցություն:
- Սառեցնող մեքենաների ձեռքբերման աջակցություն:
- Վաղահաս սորտերի աճեցում:





Հայ կանայք աշխատանքի շուկայում



ՀՀ-ում (առողջապահություն, կրթություն, մշակույթ) կանանց միջին աշխատավարձն էապես ցածր է տղամարդկանցից, չնայած նրան, որ կանանց կրթական ցենզը կամ մասնագիտական որակավորումը նույնիսկ ավելի բարձր են:

Երկրի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում կանանց ներգրավվածության մակարդակը հակադարձ համեմատական է ճյուղում առկա աշխատավարձի մեծությանը:


Գենդերային խտրազատումը զբաղվածության ոլորտում ի հայտ է գալիս նաև՝ կախված սեփականության ձևից: Տնտեսության պետական հատվածում, որտեղ աշխատավարձը մասնավորի համեմատ նկատելիորեն ցածր է, ավելի շատ կին է

զբաղված, քան տղամարդ, թեև ղեկավար պաշտոնների

մեծ մասը դարձյալ զբաղեցնում են տղամարդիկ:

Եթե տղամարդկանց զբաղվածության կառուցվածքում մեծ դեր է խաղում միգրացիան, ապա կանանց զբաղվածության մեջ ոչ ֆորմալ զբաղվածությունը





(հատկապես գյուղատնտեսության ոլորտում), որը բնութագրվում է ցածր եվ ոչ վստահելի եկամուտներով, ծանր աշխատանքային պայմաններով, երկար աշխատաօրով, իրավական եւ սոցիալական ցածր պաշտպանվածությամբ:

Եթե վարձու աշխատողների կարգավիճակում կանանց և տղամարդկանց մասնակցությունն էապես տարբեր չէ (47%-ը՝ կին, 53%-ը՝ տղամարդ), ապա ինքնազբաղվածների, և հատկապես՝ գործատուների դեպքում տղամարդկանց բաժինն արդեն

80%-ի է հասնում, դրան հակառակ՝ ընտանիքի չվարձատրվող անդամների թվում շուրջ 2/3-ը կանայք են: Տնային տնտեսության մեջ կանանց անվարձափաստույց գործունեությունը որևէ արժեքային գնահատական չի ստանում և չի ընկալվում որպես աշխատանք:

ՀՀ վիճագրական ծառայության կողմից իրականացված ժամանակի բյուջեի գենդերային վերլուծությունները բացահայտում են կանանց կրկնակի ծանրաբեռնվածության փաստը: Ըստ արդյունքների տղամարդիկ երեք անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում եկամտաբեր (վարձատրվող աշխատանք) գործունեության վրա, կանայք էլ հինգ անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում տնային տնտեսության և ընտանիքի անդամների խնամքի վրա (չվարձատրվող աշխատանք): Ընդհանուր առմամբ տղամարդիկ 30%-ով ավելի շատ ազատ ժամանակ ունեն, քան կանայք:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով Հայաստանում իրական գործազրկության մակարդակը 2012թ. դրությամբ կազմում էր 17,2%: Ընդ որում կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակների (համապատասխանաբար՝ 52% և 48%) տարբերությունը մեծ չէ: Դրա հետ մեկտեղ պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում՝ ՀՀ Զբաղվածության պետական ծառայության տվյալներով 71%-ը՝ կանայք են:



Գործազրկության գենդերային վերլուծությունը բացահայտում է, որ 40-ից բարձր տարիքային խմբերի կանայք կրկնակի անգամ ավելի շատ են ենթակա գործազրկության և աղքատության մեջ հայտնվելու ռիսկին: Անհամեմատ բարձր է կանանց մասնաբաժինը (88%) ընտանեկան հանգամանքների պատճառով գործազուրկ դարձածների թվում: Մտահոգիչ է նաև մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեցողների կազմում կանանց բարձր մասնաբաժինը (ավելի քան 80%): Այդպիսի կանայք երկարատև գործազրկության հետևանքով կորցնում են որակավորումը և աշխատանքի տեղավորվելու համար ոչ միայն մասնագիտական ուսուցման, հաճախ նաև բարոյական և հոգեբանական աջակցության և վերականգնման կարիք ունեն:

Հայաստանյան աշխատաշուկայում կանանց առջև ծառացած խնդիրը ոչ միայն աշխատատեղերի մատչելիությունն է, այլև՝ խտրականությունը աշխատանքի ընդունվելիս, երբ նրանք, չնայած կրթվածության և որակավորման բարձր մակարդակին, լիովին կախված են գործատուի նախասիրություններից: Կանանց հետ առանց իրավական հիմքերի մեծամասամբ կնքվում են կարճաժամկետ աշխատանքային պայմանագրեր, նրանք ավելի հաճախ են զբաղված լինում ոչ լրիվ աշխատանքային օրով, տեղավորվում ժամանակավոր աշխատանքի, նրանց առաջին հերթին են ազատում աշխատանքից կամ կրճատում, մեծ մասամբ առանց հիմնավոր պատճառի:





Կանանց դերը Հայաստանի տնտեսական զարգացման


գործում

Հիմնականում ՀՀ
Համայնքներում խոտհունձն ու
հակեր պատրաստելը սովորաբար
համարվում է տղամարդկանց
աշխատանք, ինչպես նաև
անասնապահությամբ և
այգեգործությամբ զբաղվում են
մեծամասամբ տղամարդիկ,

հաճախ՝ նաև երիտասարդները: Չնայած համայնքում առկա
նման գենդերային ընկալումներին, կան կանայք որ փորձում են
կոտրել կարծրատիպերը և սկսում իրենց իսկ արտադրությունը,
լինի դա այգեգործության, թե՛ ֆերմերության ոլորտում: Կանանց
նախաձեռնություններին խթանում են տարբեր ՀԿ-ներ և կազմակերպություններ:

2011 թ-ին Հայաստանի Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Զարգացման
Ազգային կետրոնը (ՓՄՁ ԶԱԿ) մշակեց ՓՄՁ զարգացման համալիր
ռազմավարություն, որը սկսեց իրագործվել վերջին երկու տարիների ընթացքում:
Ռազմավարությունը ներառում է նաև կանանց ձեռներեցությանը վերաբերող մաս:

Տվյալ ծրագրի հիմնական և վերջնական նպատակն է մեծացնել կանանց
մասնակցության բաժնեմասը Հայաստանի տնտեսության
զարգացման գործում: Տնտեսության մեջ կանանց
ավելի մեծ մասնակցությունը մեծ
դերակատարություն կունենա գալիք սերունդների
համար, ինչպես նաև Հայաստանում կապահովի
զարգացման հավասար պայմաններ կանանց և
տղամարդկանց համար: ՓՄՁ-ների՝ որպես Հայաստանի
տնտեսության հիմնասյուն, ձևավորման հարցում





շատ կարևոր գործոն կլինի ձեռնարկատիրական ոլորտ ավելի շատ կանանց ներգրավումը՝ որպես որակավորված աշխատակիցներ կամ ձեռներեցներ:

Ինչպես նաև, 2011 թվականից ի վեր Հայաստանի երիտասարդ կանանց ասոցացիան, Հայաստանում ԱՄՆ դեսպանության աջակցությամբ, իրականացնում է «Կանանց ձեռներեցության զարգացում ՀՀ-ում» ծրագիրը: Նպատակն է խթանել կանանց տնտեսական մասնակցությունը

Հայաստանում Կին ձեռներեցների ցանցի ստեղծման միջոցով, ինչպես նաև ընդգծել կնոջ տնտեսական մասնակցության կարևորությունը մեր երկրի համար և հաստատել ամուր համագործակցություն Հայաստանի բոլոր մարզերի ձեռներեց կանանց միջև:

Տվյալ ծրագրերի ստեղծումն նաև հնարավորություն է ընձեռում կանանց ցածր տոկոսով վարկավորելու և սուբսիդավորելու իրենց սկսնակ գյուղատնտեսական և այլ բիզնես ծրագրերը, մի շարք բանկեր մեծ դեր ունեն տվյալ գաղափարի իրականացման գործում:

Հետևյալ ծրագրերը մեծ խթան են հանդիսանում Հայաստանի տնտեսական զարգացման գործում կանանց դերի բարձրացման մեջ:

Այսպիսով, շնորհիվ հետևյալ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման ձևավորվել են մի շարք հաջողակ կին գործարարների հաջողության պատմություններ:





Օգտագործելով արժեքային շղթաների, կլաստերային և տեղական տնտեսական զարգացման մեթոդները՝ բացահայտվում են կին գործարարների և աշխատողների աջակցության կոնկրետ պահանջներն ու լուծումներ տրվում դրանց բավարարման համար:

Հայաստանի երիտասարդ կանանց «ասոցացիա» հասարակական կազմակերպության կողմից «Կանանց ձեռներեցության զարգացում ՀՀ-ում» ծրագրին անդամակցում են 250 կանայք: Նրանց թվում են կայացած եւ սկսնակ կին ձեռներեցներ, գյուղատնտեսներ, ինչպես նաև տնտեսական մասնակցության ուղղությամբ աշխատանքներ տանող և այս թեմայով հետաքրքրվող ուսանողուհիներ:

Չնայած աշխատաշուկայում գենդերային անհավասարության խնդրի առկայությանը, տարիների ընթացքում այն ստանում է իր լուծումը, հետևյալ նախաձեռնությունների և ծրագրերի շնորհիվ: Այսպիսով, ներկա պահի դրությամբ ՀՀ-ում այգեգործության մեջ կանայք ներգրավված են հիմնականում բերքահավաքի ժամանակ, որոնց մասնակցում է մոտ 130 կին և աղջիկ: Կանայք ներգրավված են նաև տնամերձ այգիների մշակման մեջ: Իրենց սեփական տնամերձ այգիների և հողատարա


ծքների
մշակմանը
մասնակցու
մ են ավելի
քան 300
կին:





Այգեգործություն. օգտակար զբաղմունք

Հարվարդի համալսարանի
գիտնականները երկարամյա
հետազոտությունից հետո կարողացել
են ապացուցել, որ հող փորելը և
ամառանոցում աշխատելը բարերար



ազդեցություն

են թողնում կյանքի տևողության վրա, այսպիսով կարող ենք պնդել, որ
այգեգործությունն երկարացնում է կյանքը: Այգեգործությամբ զբաղվելը օգնում է
նվազեցնել սթրեսը, արյան ճնշումը և նույնիսկ նպաստում է երկարակեցությանը: Այն
կարող է ավելի առողջարար լինել, քան մարզասրահում մարզվելը: Փորելը, փոցխելը,
ինչպես նաև նման այլ գործողությունները համաչափ ֆիզիկական վարժություններ
են, որոնք ավելի շատ կալորիա են սպառում, քան, օրինակ, հեծանիվ վարելը: Այգի
խնամելը հատկապես օգտակար է մեծահասակների համար: Սպասելով, թե երբ
ի հայտ կգա նոր ծիլը կամ բողբոջը՝ նրանք դրական ակնկալիքներով են նայում
ապագային: Դեռ ավելին, տարեցների համար այգեգործությունը «հակաթույն է ցավի
և հուսալքության դեմ», որ իր հետ բերում է ծերությունը: Մեծահասակները հաճախ են
հուսահատվում, քանի որ տարիքի հետ մեկտեղ ավելի մեծ կախվածության մեջ են
ընկնում ուրիշներից: Նրանք, ովքեր ունեն հոգեկան առողջության հետ կապված

խնդիրներ, հաճախ իրենց թեթևացած են
զգում, երբ աշխատում են գեղեցիկ ու
հանգիստ միջավայրում: Բացի այդ,
ծաղիկներ, ինչպես նաև սննդի մեջ
օգտագործվող բույսեր աճեցնելը օգնում է
տարեց անհատներին վերագտնել
ինքնավստահությունն ու ինքնահարգանքի
զգացումը:

Բազմաթիվ փորձարկումներ
իրականացնելուց հետո պարզվել է, որ





այգեգործների շրջանում մահացության ցուցանիշը 12%-ով ցածր է տանը նստել սիրողների թվից: Բացի դրանից, հետազոտությունների համաձայն՝ խոշոր քաղաքների բնակչուհիների մոտ շնչառական հիվանդություններով հիվանդանալու հավանականությունը 13%-ով է ավելի, 34%-ով էլ մեծ է ուռուցքային հիվանդությունների պատճառով մահացության ցուցանիշը:

Ինչ վերաբերում է այգեգործությանը, ապա այն դրական ազդեցություն ունի թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առողջության վրա:



Ապահովված համայնքներ, արդյունավետ այգեգործություն



Համայնքների և այգեգործության խնդիրների միասնական դիտարկումը հայտարարվում է որպես կանանց այգեգործության մեջ ներգրավելու քաղաքականության առանցքային փոփոխություն: Բարձրացնելով այգեգործության արդյունավետությունը, պետք է նաև համայնքներում զուգահեռաբար ստեղծել կյանքի հարմարավետ պայմաններ: Չի կարող լինել դիսբալանս տվյալ երկու գործակիցների միջև:

Կանանց համար այգեգործությամբ զբաղվելը գրավիչ և շահավետ դարձնելու նպատակով, ինչպես նշվեց վերևում, ոլորտում կատարվում են ներդրումներ ու աջակցությունները՝ մատչելի վարկավորում, պարարտանյութեր,



սերմացու և այլն: Մատչելի ֆինանսավորման և սպասարկման ճկուն մեխանիզմների կիրառման արդյունքում գյուղացու համար ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների ձեռքբերումը դառնալու է ձեռնտու: Կարևորություն է տրվելու չօգտագործվող հողերի այգեգործական շրջանառության մեջ ներգրավման և ոռոգվող հողատարածքների ընդարձակման խնդիրներին: Հետևողական աշխատանք է տարվելու հեռագնա արոտավայրերը ակտիվ շրջանառության մեջ ներգրավելու ուղղությամբ: Ամեն կերպ խթանվելու և խրախուսվելու է կնոջ ներգրավվածությունը տնտեսական հետևյալ ոլորտներում:

Ինչպես նշվում է այգեգործությունը նաև
առողջարար զբաղմունք է մարդու
համար, այն կարող
է նվազեցնել
սթրեսը, արյան
ճնշումը և նույնիսկ
նպաստում է

երկարակեցությանը:



Վերոնշյալ բոլոր սահմանված գործոնները կարող են նպաստել ՀՀ տնտեսությունում կնոջ դերի բարձրացմանը տվյալ, և ոչ միայն, ոլորտներում: Նման կերպ նաև կզարգանա ՀՀ տնտեսական վիճակը, խթանելով այգեգործության զարգացմանը:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):